Երևանի պետական համալսարանում գործող

Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)

իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին,

հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց 1

ԿԱՐԾԻՔ

Արտակ Արմենի Ղազարյանի «Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները քրեական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Քրեական արդարադատության համակարգում մեղադրանքը հիմնարար նշանակություն ունի. այդ հանգամանքով պայմանավորված՝ հետխորհրդային քրեադատավարական գիտության մեջ մեղադրանքի, դրա տեսակների հարցերին միշտ էլ առանցքային ուշադրություն է դարձվել: Հայրենական դատավարագիտության մեջ, սակայն, մեղադրանքի գործառույթի ուսումնասիրություններն առավելապես կատարվել են հանրային մեղադրանքի կազմակերպման հարցերի շրջանակներում: Մասնավոր մեղադրանքի

հիմնախնդիրներին նվիրված հրապարակումներ տեղ են գտել եզակի գիտական հոդվածներում, որոնք էլ իրենց հերթին վերաբերել են մասնավոր մեղադանքի խիստ նեղ խնդիրներին, և գիտական ուսումնասիրություններն այս ուղղությամբ չեն կրել համընդգրկուն բնույթ:

Ներկայացված ատենախոսությունը հայկական քրեական դատավարության տեսությունում այդ թեմայով կատարված համակարգած ու ամբողջական առաջին ուսումնասիրությունն է, ինչը զգալիորեն մեծացնում է հետազոտության թեմայի արդիականությունը:

Մյուս կողմից, հարկ է ընդգծել, որ հետազոտությունն իրականցվել է այնպիսի ժամանակաշրջանում, երբ նախագծվել և ընդունվել են ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որոնցում տեղ գտած կարգավորումներով փոփոխվում է մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի կազմակերպման մոդելն ընդհանրապես, ուստի նման պայմաններում մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ հետազոտության կատարումը դառնում է հրամայական՝ լրացուցիչ անգամ հաստատելով ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է իրագործել իր առջև դրված նպատակներն ու խնդիրները, առաջարկել տեսական մի շարք խնդիրների գիտականորեն հիմնավորված նոր լուծումներ՝ այդ թվում հերքելով գիտության մեջ տասնամյակներ շարունակ պահպանված կարծրացած պատկերացումները: Հեղինակը մասնավորապես, ելնելով տարատեսակ գիտական մոտեցումներից, առանձնացրել է մրցակցային քրեական դատավարության կազմակերպման երկու ինքնուրույն տեսություններ, հերքել դրանցից մեկը՝ բացահայտել իդեալական մրցակցային դատավարությունում մեղադրանքի կազմակերպման հնարավորությունը՝ այդպիսով հերքելով գիտության մեջ մեկ դարից ավելի տեղ գտած այն մոտեցումը, համաձայն որի իդեալական

մրցակցային դատավարությունը միայն մասնավոր անձի կողմից իրականցվող մեղադրանքի հնարավորություն է ընձեռում:

Բացի դրանից, հեղինակը քննարկման առարկա է դարձրել տեսական և գործնական նշանակություն ունեցող բազմաթիվ այլ հարցեր, ինչպիսիք են մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակների հարաբերակցության և մասնավոր մեղադրանքի տեսակների դասակարգման հարցերը: Հեղինակը հետազոտության շրջանակներում անդրադառնում է մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության կապի հարցերին, քննադատական մոտեցում ցուցաբերում քրեական դատավարության գիտության մեջ ավանդաբար գերիշխող այն մոտեցմանը, թե մասնավոր մեղադրանքն ու դիսպոզիտիվությունն օրգանապես կապված են միմյանց հետ, և որ մասնավոր մեղադրանքը քրեական դատավարությունում հանդես է գալիս իբրև դիսպոզիտիվության դրսևորում: Հեղինակն աշխատանքում փաստարկված հերքում է այդ մոտեցումը՝ հիմնավորելով, որ մասնավոր մեղադրանքը հավասարապես հնարավոր է և՛ դիսպոզիտիվության, և՛ հանրայնության սկզբունքի գործարկման պարագայում: Ատենախոսության շրջանակներում հեղինակը տարաջանտել է ավանդաբար մեկ ինստիտուտի՝ մասնավոր մեղադրանքի ինստիտուտի ներքո դիտարկվող «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը մասնավոր մեղադրանքից, ներկայացրել «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի նշանակությունը հիմնավորող չորս տարբեր տեսություններ, կատարել դրանցից յուրաքանչյուրից բխող վարույթի կազմակերպման առանձնահատկությունները պայմանավորող հետևություններ: Այդպիսով, հեղինակը մի կողմից հիմնավորել է «մասնավոր մեղադրանքի գործերի» և մասնավոր մեղադրանքի ինստիտուտների միմյանցից անկախությունը, մյուս կողմից՝ արդեն «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող չորս տեսությունների լույսի ներքո քննադատական վերլուծության ենթարկվել <<

քրեական դատավարության նոր օրենսգրքի և << քրեական դատավարության գործող օրենսգրքի կարգավորումները:

Արդյունքում արվել են տեսական ընդհանրացումներ, ներկայացվել կոնկրետ եզրակացություններ, կատարվել օրենսդրական փոփոխությունների և լրացումների առաջարկություններ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ատենախոսն ուսումնասիրությունը կատարելիս հիմնվել է ոչ միայն հայրենական հեղինակների աշխատությունների վրա, այլև օգտվել է արտասահմանյան գրականությունից, ուսումնասիրել տարբեր երկրների քրեական դատավարության օրենսգրքեր, բարձր դատարանների, ՄԻԵԴ վճիռներում տեղ գտած իրավական դիրքորոշումներ, ինչն ընդգծում է աշխատության բազմակողմանիությունը:

Ներկայացված ատենախոսության կառուցվածքը բխում է աշխատանքի նպատակից և հետազոտվող հիմնախնդիրների շրջանակից: Այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող չափորոշիչներին: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, դրանցում ընդգրված 12 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից:

Թեկնածուական ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության կառուցվածքին և ընտրված թեմային: Հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են ու տրամաբանորեն փաստարկված, իսկ աշխատանքում արված դիտարկումներն արժեքավոր նշանակություն ունեն հայրենական դատավարագիտության համար:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության կառուցվածքին և բովանդակությանը:

Այս ամենով հանդերձ, թեկնածուական ատենախոսության վերաբերյալ կցանկանայինք ներկայացնել որոշ նկատառումներ:

Այսպես, ատենախոսության պաշտպանության ներկայացվող 9-րդ դրույթում հեղինակը նկատում է, որ մասնավոր մեղադրանքի և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտները միմյանցից **անկախ** ինստիտուտներ են, ըստ այդմ՝ եզրահանգում, թե հնարավոր է, որ մասնավոր մեղադրանքի գործերով իրականացվի հանրային մեղադրանքը և հակառակը՝ հանրային մեղադրանքի գործերով մասնավոր մեղադրանք, սակայն միևնույն ժամանակ ամբողջ ատենախոսության մեջ հեղինակն օգտագործում է «մասնավոր մեղադրանքի գործ» եզրույթը, որը կարծես հակասության մեջ է մտնում հենց նույն 9-րդ դրույթում տեղ գտած երկու ինստիտուտների միմյանցից անկախ լինելու հեղինակի պնդման հետ: Կարծում ենք, որ այս հնարավոր հակասությունը կբացառվեր, եթե ատենախոսը հետազոտությունում այդ գործերի շրջանակն ուրվագծող այլ եզրույթ մշակեր:

Բացի դրանից, ատենախոսության 4-րդ գլխում հեղինակը, վերլուծելով << նոր քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները, նկատում է, որ նախատեսված մոդելն իր կառուցվածքով «խիստ մոտենում է» «մասնավոր դելիկտի» ժամանակավրեպ տեսության գաղափարներից բխող հետևություններին: Հետևաբար ատենախոսը in abstracto արձանագրում է նոր քրեական դատավարության օրենսգրքի մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի բարեփոխման երկու հնարավոր ուղղություն՝ կա՛մ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը կառուցել ընդունելի մի տեսության՝ տուժողին գթալու տեսության և դրանից բխող հետևությունների, կա՛մ մյուս տեսության՝ «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսության և դրանից բխող գաղափարների վրա (տե՛ս ատենախոսության էջ 163): Ընդ որում, ելնելով քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում տեղ գտած այն գաղափարից, թե մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի նոր մոդելը նոր օրենսգրքով պիտի ունենար

մասնական քննությունը բեռնաթափելու և գործի քննության ծանրությունը դատարան տեղափոխելու նպատակ, ատենախոսության հաջորդ էջերում (տե՛ս էջ 165) հեղինակը in concreto եզրահանգում է, որ այդ նպատակին հասնել հնարավոր կլիներ, երբ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը կազմակերպվեր և հիմնված լիներ «...»պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսության և դրանից բխող հետևությունների վրա, **որոնք արդեն շարադրվել են վերևում»**: Թեև մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսությունը և տեսության էությունից բխող այդ գործերով վարույթի կազմակերպման հետևությունները հեղինակը, վերացարկվելով կոնկրետ օրենսդրական կարգավորումներից, կատարել է աշխատանքի 3-րդ գլխում (տե՛ս 140-140-րդ էջեր), սակայն աշխատանքը շատ ավելի կշահեր, եթե տեսությունից բխող հետևություններն արդեն կոնկրետացվեին քրեական դատավարության նոր օրենսգրքի բարեփոխման հստակ օրենսդրական առաջարկությունների տեսքով, ինչը հեղինակի կողմից չի արվել՝ այդպիսով իսկ օրենսդրական բարեփոխումների առաջարկին հաղորդելով առավել վերացական բնույթ:

Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ ատենախոսության թեմայի և հետազոտության խնդիրների համադրման շրջանակներում, թերևս, հեղինակի կողմից հարկ էր անդրադառնալ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 451-րդ հոդվածի համակարգային իրավակարգավորումներին, մասնավորապես քննարկվող հոդվածի 3-րդ մասին, որը վերաբերում է քրեական հայցի բավանդակությանը: Այս իմաստով հատկապես կարևորվում է հոդվածի նշված մասի 5-րդ կետի պահանջն առ այն, որ անհրաժեշտ է ներկայացնել մեղադրանքը հիմնավորող նյութեր: Ցանկալի կլիներ անդրադառնալ դրանց բնույթին, հիմնավորվածության նվազագույն շեմին և այլն, ինչպես նաև ուսումնասիրել միջազգային փորձը, համադրել մեր քրեական արդարադատության համակարգի

հետ՝ նկատի ունենալով նշված ինստիտուտի նորամուծությունը հայրենական քրեական դատավարությունում:

Ամենով հանդերձ, հարկ եմ համարում նկատել, որ ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը: Արտակ Ղազարյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ամբողջական, ճամալիր և ավարտուն հետազոտություն է, հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները, հասնել դրված նպատակներին ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել արժեքավոր առաջարկություններ: Ասվածի մասին վկայում են պաշտպանության ներկայացվող դրույթներում և աշխատանքի եզրափակիչ մասում շարադրված հետևությունները:

Գտնում ենք, որ Արտակ Արմենի Ղազարյանի՝ «Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները քրեական դատավարությունում» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանատիպ աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր,

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Վ.Գ.Ենգիբարյան

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Գ. Ենգիբարյանի ստորագրությունը հաստատում եմ։

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հ. Մ. Հայրիկյան

29.11.2021թ.